ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների վերլուծական մտածողության և կշռադատման կարողությունների զարգացումը տարբեր մեթոդների և ՏՀՏ-ի կիրառման միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Կարինե Թադևոսյան

ԴՊՐՈՑ՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____13

Խմբի նկարագիր_____13

Հետազոտության ընթացք_____14

Փորձարարական դաս 1_____15

Փորձարարական դաս 2_____16

Փորձարարական դաս 3_____17

Տվյալների մշակում և վերլուծություն_____18

Եզրակացություն_____19

Օգրագործված գրականության ցանկ_____20

Հավելված

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարական հասարակության մեջ բարդ հանրային խնդիրների լուծումը քաղաքացիներից պահանջում է բանակցել իրենց տարբերությունների շուրջ վերլուծության և հանրային քննարկման մջոցով: Հետևաբար հասարակագիտության կարևորագույն խնդիրներից է օգնել սովորողներին նման քննարկումներին մասնակցելու համար համապատասխան հմտություններ զարգացնել: Ժողովրդավարական կոմպետենցիաների ձևավորումը կխթանի սովորողներիհասարակական և քաղաքական խնդիրները վեր հանելու, վերլուծելու, դատողություններ անելու կարողությունների, քննադատական և վերլուծական մտածողության հմտությունների զարգացմանը:

Այսօր մեր սովորողները պասիվ են քննարկվող իրավիճակների կամ հարցերի շուրջ իրենց դիրքորոշումներն ու կարծիքները ազատ արտահայտելու հարցում: Շատ դեպքերում նրանց չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Սովորողները շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ ենհամադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները:

Հետազոտության նպատակն է խթանել նման սովորողների ակտիվությունը և առավելագույնս ներգրավվածությունը դասապրոցեսին, զարգացնելով նրանց մոտ վերլուծական մտածողություն և կշռադատումներ անելու կարողություններ՝ հարցակենտրոն ուսումնառության , համագործակցային և ինտերակտիվ այլ մեթոդների համակցման ու ժամանակակից ՏՀՏ-ի ակտիվ օգտագործման միջոցով:

Ժողովրդավարական արժեքների և սկզբունքների ձևավորումը կնպաստի հետևյալ խնդիրների լուծմանը.

- ռեալ իրավիճակների քննարկման միջոցով սեփական իրավունքների և ազատության իրացման ունակությունների զարգացում՝ առանց խախտելու մյուս քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները,
- նոր իրավիճակներում կողմնորոշման ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունների և առաջադրանքների առկայություն,
- արդյունավետ հաղորդակցման հմտությունների, համագործակցության ունակությունների, բախումնային իրավիճակների կանխման, առանց բռնություն գործադրելու ծագած կոնֆլիկտները հարթելու կարողությունների ձևավորման խթանում,

- դասավանդման ընթացքում սովորողների ակտիվությունը խթանող մոտեցումների՝ քննարկումների, բանավեճերի կայլն միջոցների կիրառման հնարավորություն,
- ուսումնառության որակի բարելավում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական հիմնական ծրագրերի վերջնարդյունքներն ուղղված են որոշակի կարողունակությունների ձևավորմանը։

ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

Ըստ Դինեսոնի և Գրոսի (2002թ.) հասարակագիտության նպատակները հետևյալն են.

- աշակերտներին նախապատրաստել փոփոխվող աշխարհում ապրելուն,
- ընդլայնել աշակերտների մտահորիզոնը և համայնքի, պետության, ազգի ուաշխարհի մասին նրանց ունեցած պատկերացումները,
- աշակերտներին զինել անձնական և հասարակական կյանքում անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով և կարողություններով,
- աշակերտներին խրախուսել, որպեսզի նրանք մասնակցեն հասարակության գործերին և աշխատեն «լավ» հասարակության կայացմամբ ուղղությամբ:

Հասարակագիտության վերոնշյալ նպատակների հիման վրա հեղինակներն առաջարկում են հասարակագիտության հետևյալ չորս արդյունքները.

1. Կիրառել կշռադատման մեթոդներ՝ տնտեսական, քաղաքական և հասարակական որոշումների կայացման ընթացքում:

2. Հասկանալ հասարակագիտական առարկաների բառապաշարը, տրամաբանությունը և

մեթոդաբանությունը, ինչպես նաև դրանք փոխադարձ կապերը:

3. Գաղափարներ, մտքեր փոխանակել խոսելու, ունկնդրելու , գրելու և այլ նշանների օգտագործման միջոցով:
4. Օգտագործել հասարակագիտության, պատմության, գրականության և գեղարվեստի մեթոդները հասարակական երևույթները նկարագրելու և հասկանալու համար:

Հանրակրթության ոլորտում ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը.
https://elearning.iedf.am/course/view.php?id=583#section-1

- բարելավում է ուսումնառության ձեռքբերումների որակը,
- սովորողների մոտ սոցիալական հիմնախնդիրների դիտարկման, ճանաչման և ընկալման հմտությունների ձևավորում ու դրանց հաղթահարման հնարավոր ուղիների վերաբերյալ խորհրդածելու ունակության զարգացում,
- ռեալ իրավիճակների քննարկման միջոցով սեփական իրավունքների և ազատության իրացման ունակությունների զարգացում՝ առանց խախտելու մյուս քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նոր իրավիճակներում կողմնորոշման ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունների և առաջադրանքների առկայություն,
- դասավանդման ընթացքում սովորողների ակտիվությունը խթանող մոտեցումների՝ քննարկումների, բանավեճերի և այլն միջոցների կիրառման հնարավորություն,
- արդյունավետ հաղորդակցման հմտությունների, համագործակցության ունակությունների, բախումնային իրավիճակների կանխման, առանց բռնություն գործադրելու ծագած կոնֆլիկտները հարթելու կարողությունների ձևավորման խթանում,
- քննադատական մտածողության զարգացում:

Ջոն Դիվեյը նշում է, որ մարդը սկսում է մտածել այն ժամանակ, երբ որևէ խնդրի առջև է կանգնում:

(Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր /ձեռնարկ մանկավարժների համար/, հեղինակներ՝ Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան և ուրիշներ)

Հարցակենտրոն ուսուցումը կենտրոնանում է խնդրահարույց հարցերի վրա՝ դրանից ելնելով շատ կարևոր է խնդիրների ընտրությունը: Երբ սովորողներին որևէ խնդիր ենք առաջադրում, ապա նրանք սկսում են ուսումնասիրել

խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ՝ փորձելով կանխատեսել և ստուգել դրանց հնարավոր տրամաբանական հետևանքները, որն էլ զարգացնում է նրանց մտածողությունը: Շատ կարևոր է նաև, որ սովորողները կարողանան լուծել իրենց առօրյա կյանքում առաջացող խնդիրները, որը հնարավոր է բոլոր առարկաներից ստացած գիտելիքների, կարողությունների հմտությունների շնորհիվ: Այսպիսով բոլորիս նպատակն էդաստիարակել մտածող, գիտելիքներով հարուստ, որոշակի արժեհամակարգ ունեցող անհատներ:

Չափանիշներ հարցակենտրոն բովանդակության ընտրության համար.

1. Խնդիրների ընտրությունը- ի հատ եկող բովանդակությունը կենտրոնանում է հասարակական և անհատական խնդիրների վրա, ընդ որում դասարանային քննարկման ընթացքում սովորողների և ուսուցիչների փոխներգործությունը բովանդակության ծագման միակ աղբյուրը չէ:

2. Բովանդակության ընտրությունը- Գոյություն ունի բովանդակության ընտրության հինգ չափանիշ.

   - Համապատասխանությունը
   - Կշռադատումը
   - Գործողությունը
   - Գործնականությունը
   - Ընկալման խորությունը

- Համապատասխանության չափանիշը

Բովանդակության ընտրության ժամանակ անհրաժեշտ պատասխանել հետևյալ հարցին. Որքնո՞վ է բովանդակությունը համապատասխանում աշակերտների առանձնահատկություններին և այն հասարակական միջավայրին, որում նրանք ապրում են:

- Կշռադատման չափանիշը

Կշռադատման չափանիշը սահմանող հիմնական հարցերն են.

_Արդյո՞ք տվյալ բովանդակությունը խթանում է մտածողությունը:

_Արդյո՞ք այն պարտավորեցնում է աշակերտներին այպիսի դիրքորոշում որդեգրել, որոնք կարող են հստակ

հիմնավորել:

_Արդյո՞ք աշակերտների սեփական փորձառությունը հնարավորություն է տալիս ներկայացնել ու քննադատորեն վերլուծել հարցի բոլոր կողմերը:

_Արդյո՞ք հարցի նկատմամբ եղած տարբեր դիրքորոշումները հիմնավորող նյութերը վստահելի աղբյուրներից են:

❖ Գործողության չափանիշը

Գործողության չափանիշին վերաբերող հիմնական հարցերից է.

Արդյո՞ք բովանդակության տվյալ միավորը կարող է հանգեցնել գործողությունների պլանի մշակման:

Բովանդակությունը կարող է խթանել քննադատական մտածողությունը, սակայն եթե նպատակն ի վերջո հասարակական պայմանների բարեփոխման հասնելն է, ապա անհրաժեշտ է , որ այն աշակերտներին մղի նաև գործողության:

❖ Գործնականության չափանիշը

Գործնականության չափանիշին վերաբերող հիմնական հարցերից է.

_Արդյո՞ք ի հայտ եկող բովանդակությունը կամ ծրագիրը կիրառելի են:

_Կան արդյո՞ք բավարար մարդկային և նյութական ռեսուրսներ նման աշխատանք իրականացնելու համար:

❖ Ընկալման խորությունը

Ընկալման խորությանը վերաբերող հիմնական հարցերից է.

Արդյո՞ք բովանդակությունը և այն դասավանդող ուսուցիչը հնարավորություն տալիս են աշակերտներին քնարկվող խնդիրը կամ հարցը կապել համապատասխան աղբյուրների հետ:

(Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր /ձեռնարկ մանկավարժների համար/, հեղինակներ՝ Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան և ուրիշներ)

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների յուրատեսակ համակարգ է, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան: Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խումբով՝ ավանդական և նոր կամ ժամանակակից: Մեթոդները բաղկացած են հնարներից և վարժություններից:

«Մտագրոհ» (brainstorm) – խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների միջև կոնկրետխնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:



https://znanio.ru/media/-2608388

«Վենի դիագրամ» - այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են ընդհանրությունները:

https://znanio.ru/media/-2608388

«Վեր-որոնում» - հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են ինտերնետային աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ: Այս մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային մի հարցադրում կամ խնդիր, որը գործնական, ոչ թե տեսականպատասխանի կամ լուծման կարիք ունի:

«Դեպքի ուսումնասիրություն» - մեթոդը համեմատաբար նոր է: Դրա կիրառման ժամանակ մասնակիցներին ներկայացվում է իրական կամ երևակայական իրավիճակների (հանգամանքների, դեպքերի, դիպվածների) մի շարք, որի ուսումնասիրման, քննարկման, վերլուծության ուղղությամբ այնուհետև անհրաժեշտ է լինում տնական աշխատանք կատարել:

«Խճանկար» (Ջիգսո) –անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն մբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:

«Շրջագայություն պատկերասրահում» - այս մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է: Նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

«Խմբային հետազոտության մեթոդ» - այս մեթոդի էությունը հետևյալն է. դասավանդողը լսարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրությանհամար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում և ներկայացնում ամբողջ լսարանին:

«Խաղեր» - Խաղային ուսուցումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ՝ կապված մասնագիտական գործունեության, մարդկային փոխհարաբերությունների, անձնական դժվարությունների հետ:
Խաղի մեջ առարկայանում են իրավիճակներն ու իրադրությունները, գործունեության որոշակի ձևը, հասարակական փորձը, իսկ արդյունքում կատարելագործվում է սեփական վարքագծի վերահսկողությունը:



https://fs.znanio.ru/d5af0e/72/ec/1bf7d6ca08efb4206a6662031597e0265a.jpg

«Բանավեճ» – այս մեթոդը կիրառվում է ուսանողների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները, 2 կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին:



https://fs.znanio.ru/d5af0e/e1/ec/2e345177c669451119e2df07ff0e559a39.jpg

Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի: Այն գործիք է ուսուցչի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին: Ժամանակակից դպրոցը պետք է հետևի ժամանակի պահանջներին, ինչը նշանակում է, որ ժամանակակից ուսուցիչը պետք է համակարգիչ օգտագործի իր գործունեության մեջ, քանի որ, դպրոցի հիմնական խնդիրն է կրթել գրագետ, մտածող, քաղաքացիների մասին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու ունակ նոր սերունդ:Երկար տարիների փորձը ցույց է տվել, որ համակարգչային նոր տեխնոլոգիաները բարձր ազդեցություն ունեն ՝ պայմանով, որ դրանք ապահովված են մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաներով:Կրթության արդիականացման հայեցակարգի իրականացման շրջանակներում և ժամանակակից պետական կրթական քաղաքականությանը համապատասխան, ուսումնական հաստատության գործունեության արդյունքն է «հիմնական իրավասությունների» համալիրի ձևավորումը, որոնք նպաստում են հասարակության սոցիալականացմանը:Դասապրոցեսը կազմակերպել եմ տարբեր դասարաններում,քանի որ աշակերտների քնակը բավականին քիչ էր:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունը կատարել եմ Ջաղացաձորի միջնակարգ դպրոցի՝ 8-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում: Դասարաններում սովորում էին համապատասխանաբար 3, 4 և 5 աշակերտ:Նրանցից 5-ը աղջիկներ են,իսկ 6-ը տղաներ:Ունենք և լավ և թույլ սովորող աշակերտներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտության նպատակն էր սովորողների մոտ իրավիճակային քննարկումներին մասնակցելու համար համապատասխան հմտություններ և կարողունակություններ զարգացնել:

Սովորողների մոտ ձևավորված Ժողովրդավարական արժեքների և սկզբունքների արդյունքում քննարկվող իրավիճակների կամ հարցերի շուրջ նրանք իրենց դիրքորոշումներն ու կարծիքները կարողանում են ազատ և անկաշկանդ արտահայտել:

Այս փորձարարական դասերին իմ նպատակն էր սովորողներին նախապատրաստել հարափոփոխ աշխարհում ապրելուն, ընդլայնել նրանց մտահորիզոնը և համայնքի, պետության, ազգի ու աշխարհի մասին նրանց ունեցած պատկերացումները:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Դասն անցկացվել է 12-րդ դասարանում, որտեղ սովորում են 4 տղա և 1 աղջիկ :

Թեման բավականին հետաքրքիր էր՝ ինտեգրված թեման «Կոռուպցիան» էր, և նրանք պետք է իրենց դիրքորոշումը ներկայացների թեմայի շուրջ: «Կոռուպցիա» թեմային երեխաները ծանոթանում են դեռևս 8-րդ դասարանում, սակայն հիմա արդեն կարող եմ ասել, որ նրանք ունեն հատակ ձևավորված վերաբերմունք կոռուպցիայի վերաբերյալ: Դասն անցկացվեց հարցակենտրոն, խմբային

հետազոտության մեթոդներով՝ ՏՀՏ միջոցների կիրառմամբ,ֆիլմադիտումով, ինչն էլ ավելի հետաքրքրություն և դասիններգրավվելու ցանկություն առաջացրեց սովորողների մոտ: Հատկապես էլեկտրոնային խաղի միջոցով նրանք

կարողացան հեշտությամբ իրավիճակները խմբավորել ըստ վերին և ստորին մակարդակներում տեղի ունեցող կոռուպցիոն և ոչ կոռուպցիոն երևույթների:

Սովորողները հստակ ձևակերպում էին իրենց դիրքորոշումները և փաստարկներով հիմնավորում առաջադրված իրավիճակների վերաբերյալ իրենց տեսակետները:

Կարծում եմ ինձ հաջողվեց ապահովել սովորողների լիարժեք մասնակցություն դասին և նրանց մոտ ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացուն բնորոշ հմտություններ և կարողություններ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՉԱՐԻՔ Է:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Դասն անցկացվել է 9-րդ դասարանում, որտող սովորում են 3 տղա և 1աղջիկ : Թեման՝ «ԸՆտրություններ»-ը որպես ուղղակի ժողովրդավարության իրացման եղանակ: Դասն անցկացվեց համագործակցային, հարցադրումների և քննարկումների մեթոդներով: Ներկայացվեց ազատ ընտրությունը որպես քվեարկության միջոցով որոշումներ կայացնելու ձև: Սովորողները կարողացան բացատրել ազատ և արդար ընտրությունների կարևորությունը իրենց և հասարակության համար: Նրանք ծանոթացան ընտրական տեղամասերերի և տեղամասային կենտրոնների ձևավորելու կարգին:

Սովորողները ազատ արտահայտեցին իրենց դիրքորոշումները ընտրություններին գիտակցված մասնակցության կարևորության մասին և բացասաբար վերաբերվեցին այնպիսի երևույթներին, ինչպիսիք են ընտրակեղծիքներն ու ընտրակաշառքը: ՏՀՏ գործիքների կիրառումը դյուրինացրեց ուսուցանվող նյութի յուրացումը և մոտիվացրեց սովորողներին ներգրավվելու դասապրոցեսին:

Առանձնակի հետաքրքրությամբ սովորողները լրացրեցին learningapps էլեկտրոնային գործիքով կազմված ամփոփիչ թեստը, ինչն էլ հեշտացրեց գնահատման գործընթացը: Արդյունքները բավականին գոհացնող էին:



ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3

Հետազոտությունն անցկացվել է 8-րդ դասարանում, որտող սովորում են 2 տղա և 1 աղջիկ : Թեման՝ «Արդարությունն» էր: Դասը սկսվեց արդարության վերաբերյալ մեծն Սայաթ-Նովայի և Ցիցերոնի խոսքերով:

Արդարությունը բոլոր առաքինություններից բարձրագույնն է...

Ցիցերոն

Արդար դատե, չէ վուր թաքավուր իս դուն...

Սայաթ-Նովա

Դասը համակցված դաս էր՝ հարցակենտրոն ուսուցմամբ, բուռն քննարկումներով: Սովորողները կատարեցին ինքնուրույն վերլուծություններ և համադրեցին տարբեր իրավիճակներ: Նրանք կարողացան գնահատել արդարության դրական կողմերը,բացատրեցին արդարություն հասկացությունը, կարողացան տարբերել արդարության իրավական և բարոյական կողմերը:Խմբերում կային տարբեր կարծիքներ քննարկվող հարցի շուրջ (Հնարավո՞ր է ապրել միայն բարոյական նորմերով): Քննարկման արդյունքում սովորողները կարողացան իրենց փաստարկներով ապացուցել, որ մարդկային հարաբերությունները կարգավորելու համար հավասարապես կարևոր են արդարության և՛ բարոյական, և՛ իրավական կողմերը:

Սովորողների մոտ ձևավորվեց դրական վերաբերմունք արդարության նկատմամբ, նրանք հիմնավորեցին արդարության կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Սովորողների մոտ ձևավորվեց խոսքի ազատության և սեփական կարծիքն ազատ արտահայտելու, ինչպես նաև դիմացինին լսելու և նրա տեսակետը հարգելու մշակույթ: Ամփոփման փուլում կատարվեց ուսուցողական գնահատում՝ ըստ սովորողների մասնակցության աստիճանի:

Որպես տնային առաջադրամք հանձնարարվեց թերի թողնված պատմվածք, որըսովորողները պետք է շարունակերին ըստ իրենց դիրքորոշումների:

Կարծում եմ ինձ հաջողվեց իրականացնել այն նպատակը , որը դրել էի դասի հիմքում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության սկզբում ես իմ առջև դրել էի խնդիրներ և նպատակներ,որոնք իսկապես կարողացանք լուծել դասապրոցեսների ընթացքում:

Երեխաների ներգրավածությունը փորձարարական դասերի ընթացքում բավականին բարձր էր:

8-րդ դասարանում աշակերտների թվի 100%-ը ներգրված էր դասին,իսկ 85 %-ը ցուցաբերեծ վերլուծելու կարողություն:

9-րդ դասարանում աշակերտների թվի 95%-ը ներգրված էր դասին,իսկ 78 %-ը ցուցաբերե ց վերլուծելու կարողություն:

12-րդ դասարանում աշակերտների թվի 100%-ը ներգրված էր դասին,իսկ 88 %-ը ցուցաբերեծ վերլուծելու կարողություն:

Ստորև ներկայացնում եմ տվյալները գրաֆիկական աղուսյակի միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, բավական մեծ է ուսուցչի դերը սովորողների մտածողության զարգացման գործում: Նրա խնդիրն է ստեղծել համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափի սեփական տեսակետն ազատ արտահայտելուց, պատրաստ կլինի լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում սովորողի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ, սովորողը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում
ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ : Սովորողների իրավագիտակցության զարգացման համար բավարար չեն դասագրքերը, անհրաժեշտ է օգտվել ՏՀՏ միջոցների ընձեռած հնարավորություններից և էլեկտրոնային հարթակները կիրառել ի շահ սովորողի:

Վերլուծությունները փաստում են, որ սովորողների մոտ քննադատական մտածողություն զարգացնելու գործում մեծ դեր է կատարում նաև հարցակենտրոն ուսուցումը՝ բաց հարցերի կիրառմամբ: Դրանք մեծացնում են սովորողների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են սովորողին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, նոր վարկածների առաջադրման և ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում սովորողների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրահանգումներ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության ոլորտում ժողովրդավարության և մարդուիրավունքների կրթությունը. https://elearning.iedf.am/course/view.php?id=583#section-1
2. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր /ձեռնարկ մանկավարժների համար/, հեղինակներ՝ Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյանն ուրիշներ:
3. http://gspi.am/media/pdf/a2149c61287b1224c973cdd4036899cb.pdf
4. https://znanio.ru/media/-2608388
5. https://fs.znanio.ru/d5af0e/e1/ec/2e345177c669451119e2df07ff0e559a39.jpg
6. https://fs.znanio.ru/d5af0e/72/ec/1bf7d6ca08efb4206a6662031597e0265a.jpg
7. https://fs.znanio.ru/d5af0e/94/f7/3585d43a10d8348c67f8cde90d24b03e51.jpg

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Կարինե Թադևոսյան

Առարկա՝	Հասարակագիտություն	Ամսաթիվ	13.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	12-րդ
Խմբի նկարագիր	5 աշակերտ,3 տղա 2 աղջիկ						
Թեմա՝	«Կոռուպցիա»						
Օգտագործվող նյութեր	Համակարգիչ Դասագիրք Նկարներ						
Դասի նպատակը՝	Սովորողները կարողանան գիտակցել կոռուպցիայի էությունը, կարողանան տարբերել և վերլուծել կոռուպցիայի դրսևորումները, ձևավորել բացասական դիրքորոշում երևույթի նկատմամբ:						

Ուսուցման փաստեր,որոնք կվիճարկեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտը՝ ● Կիմանա կոռուպցիա հասկացությունը: Կներկայացնի կոռուպցիայի պատճառները և ձևերը: ● Կկարողանա նկարագրել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի դեպքերը և հիմնավորել դրանց բացասական ազդեցությունը տվյալ ոլորտի զարգացման վրա: Սովորողների մոտ կձևավորվի քաղաքացիական դիրքորոշում այդ երևույթի նկատմամբ:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	
15-20ր	Ընթացք	Դասը սկսել մտագրոհ մեթոդով՝ վերհանելով «Կոռուպցիա» հասկացության վերաբերյալ սովորողների ունեցած պատկերացումները: Գրատախտակին գրի առնել սովորողների արտահայտած մտքերը: Դիտել տեսաֆիլմը: Դասարանը բաժանել 2 խմբի, յուրաքանչյուր խմբին տրվում են 3-ից 4 իրավիճակներ:	Արտահայտել <<Կոռուպցիա>>հասկացության վերաբերյալ պատկերացումները: Գրի առնել ռատախտակին մտքերը: Դիտել տեսաֆիլմ: Խմբերը քննարկում են իրավիճակները և պատասխանում տրված հարցերին, պատասխանները գրամցում Ա1 չափի թղթի վրա, պարզում են, թե այդ իրավիճակներից որն է կոռուպցիոն իրավիճակ, որը՝ ոչ կոռուպցիոն, և որ մակարդակներում (ստորին կամ վարչական և վերին կամ Էլիտար) են դրանք տեղի ունենում: Կատարել վերլուծություն	

7-10ր	Ավարտ	Տալ բախշման նյութ: Ամփոփում է նյութը հարցերի միջոցով: Կատարում է միավորային գնահատում:	Սովորողները ներկայացված իրավիճակները՝ գնահատում են՝ ելնելով կոռուպցիոն հանցագործությունների լրամշակված ցանկից: Պատասխանում են հարցերին:	
Տնային աշխատանք 3-5ր		Գրի առնել Կոռուպցիային վերաբերյալ հոդվածները:		

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Կարինե Թադևոսյան

Առարկա՝	Հասարակագիտություն	Ամսաթիվ	15.04.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	9-ր դ
Խմբի նկարագիր	4 սովորող, 3 տղա և 1 աղջիկ:						
Թեմա՝	<<Ընտրություններ>>						
Օգտագործվող նյութեր	Համակարգիչ Դասագիրք Նկարներ						
Դասի նպատակը՝	Աշակերտը կարողանա՝ • Բացատրել ազատ և արդար ընտրությունների կարևորությունը իր և հասարակության համար: • Զարգացնել քաղաքացիական հասարակություն ձևավորելու հմտություններ:						

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ • Տարբերակել ընտրության տեսակները: • Վերլուծել ընտրություններին գիտակցված մասնակցության ազդեցությունները ժողովրդավարական հասարակության կայացման գործում:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	
15-20ր	Ընթացք	Դասը սկսել զրույցի մեթոդով՝ խոսել ընրությունների մասին,հասկանալ ինչքնով են աշակերտները տիրապետում ընտրությունների մասին ինֆորմացային: Բցատրել որոնք են ընտրությունների տեսակները: Ներկայացնել ինչ ձևով է ընթանում ՀՀ ընտրությունները: Դասարանը բաժանել խմբերի: Կազմակերպել բանավեճ;	Մասնակցել զրույցին,արտահայտել մտքեր ընտրությունների մասին: Ուկնդրել ուսուցչուհուն: Բաժանվել խմբերի: Իրականացնել բանավեճ:	
7-10ր	Ավարտ	Հարցերի միջոցով ամփոփել թեման: Կատարել միավորային գնահատում	Պատասխանել ուսուցչուհու հարցերին:	
Տնային աշխատանք 3-5ր		Սովորել դասը պատմել: Տետրերում գրավոր պատասխանել դասի վերջին հարցերին:		